ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

“ 02” օգոստոսի 2022թ. N……

«Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊ ընկերության տնօրեն Ն. Սիմոնյանին
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ, փողոց 1, տուն 46
ՀՎՀՀ 08618778
Էլ. Փոստ golden-karap@list.ru

Հարգելի՛ պարոն Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊ ընկերության միջև 11.10.2021 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/34Շ-2» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որի շրջանակում Կատարողի կողմից ներկայացվել է Պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով։

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 8.13 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊ ընկերությանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել վերոնշյալ փաստաթղթերը։

Հիմք ընդունելով, որ «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները համաձայն Պայմանագրի 8.13 կետի և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ և 17-րդ ենթակետերի դրույթներով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը միակողմանի լուծում է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/34Շ-2» ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված Պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հայտնում ենք, որ «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊ ընկերության նկատմամբ կկիրառվեն ՀՀ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ընկերության տվյալներն օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

8/2/2022

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

Հարգանքով՝ Ա. Երիցյան

Կատարող՝ Մ. Փարսադանյան
Գնումների համակարգման և կազմատնտեսական վարչություն
Հեռ.(010) 511-328
Էլ. փոստ՝m.parsadanyan@mta.gov.am